ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 988-Ա « 23 » փետրվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի
Հ.3063-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.10.2025 թվականի եզրակացությունը և քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 2-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.135/3 բնակելի տան նկատմամբ Բորիկ, Կարինե, Կարեն, Արտակ Աբալյանների և Վալյա Այվազյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3063-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.135/3 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման 1-ին կետում՝ «118.4» թվերը փոխարինել «118.07» թվերով, իսկ «33.78» թվերը՝ «32.87» թվերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ